

զգենլէ վերջ, ինչպէս բնական է խորհիլ, որով բոյրն աւելի թարմ կը լինէր: Վերջապէս այս ընդհանուր օծումը միայն Հայոց յատուկ չէր, այլ Յունաց, Հռովմայեցւոց (Դար. Ա, 1272, '73), Հրէից (Ամովս, 9, 6. Ղկ. Է, 46), Կեսարացւոց (Բրս. Արբ.) եւ ուրիշ ազգերու եւս:

Գ. Կարգը կու գար հագոռտի պերճանաց: Տիկնայք նախ իրենց սովորական պճնասիրութեամբ «յարմարէին սանդրով զհեր գլխոյ իւրեանց» (Փրպ. 332). յարդարանք՝ զոր այր մարդիկ եւս հարկադրուած էին ընել իրենց երկար վարսից, զորս կը «հիւսէին» իբրեւ մասն պաճուճանաց (Մանդ. 43): — Բնական էր՝ որ շքեղութեան ու պատուոյ ցուցադրութեան այսպիսի հանդիսի մը մէջ հրաւիրեալք հագնէին իրենց լաւագոյն զգեստները: Արդարեւ Դրաստամատ իւր արքային «ագոյց պատմոռման ազնիւ» (Փաւս. 207), որ ազատաց հանդիսական հանդերձն էր: Եւ Անյուշի նոյն կալանաւորին փառաց օրերուն՝ բոլոր նախարարք անոր ընթրեաց մէջ կը բազմէին «պատիւ ի գլուխ» (նոյն, 67), զոր ես երիզածեւ թանկագին վարսակալը կ'իմանամ: Սա կ'ենթադրէ միւս զարդարանքներն ալ: Ըստ այսմ՝ Վասակ Սիւնեաց տէրն երթալու համար «յընթրիս»